

Մ. Նալբանդյանի անվան «Շիրակի պետական համալսարան»
հիմնադրամի Արհեստակցական կազմակերպության 2022 թվականի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Զեկուցող ՇՊՀ Արհեստակցական կազմակերպության նախագահ
Պրոֆեսոր Վալերի Խաչատրյան

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի արհեստակցական կազմակերպությունը համալսարանի աշխատողների կամավոր միավորում է, որը ստեղծվում է նրանց գործունեությունը համակարգելու, աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված առցիալական և այլ շահերն ու իրավունքները ներկայացնելու համար:

Արհեստակցական կազմակերպության գործունեության հիմնական ուղղություններն են.

1. Մասնակցել գործատուի կողմից արհեստակցական կազմակերպության անդամների աշխատանքային առցիալ-տնտեսական և իրավական շահերը շոշափող կանոնակարգերի մշակման աշխատանքներին,

2 Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վերահսկել գործատուի կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը,

3. Համալսարանի ղեկավարության առջև հանդես գալ ներբուհական կյանքին վերաբերող նախաձեռնություններով՝ նպատակ ունենալով բարելավել ՇՊՀ-ի աշխատակիցների առցիալական վիճակն ու պայմանները:

Հաշվետու ժամանակահատվածում ՇՊՀ արհկոմի աշխատանքները կրել են սոցիալական բնույթ:

Հաշվետու ժամանակահատվածում արհկոմը կազմակերպել և անցկացրել է տարբեր տեսակի ու բնույթի միջոցառումներ՝ նվիրված «Մեծ Հաղթանակ»-ին, «Եղեռն»-ին, «Դեկտեմբերի 7 ին, «Մայրության և գեղեցկության»-տոնին, «Ամանոր»-ին:

Միշտ ծաղկեպսակներով այցելել ենք «Մեծ Հաղթանակ»-ին, «Շուշիի ազատագրման»-ը, «Եղեռն»-ի զոհերին, «Դեկտեմբերի 7--ին նվիրված հուշարձաններին: Արհեստակցական կազմակերպությունը ունի 169 անդամ (Համալսարանի 450 անդամից):

Այս տարին էլ նախորդի պես ծանր էր սոցիալական առումով (թանկացումներ, ոչ բարձր աշխատավորձ):

Արհեստակցական կազմակերպությունն, ինչպես նախորդ տարիներին, մեծ ուշադրություն է դարձնում համալսարանի սոցիալապես անապահով արհկոմի անդամներին: Միշտ ընդառաջում և Ֆինանսապես աջակցում է նման խնդրանքով դիմող մեր անդամներին:

Այս տարի այդ նպատակով հատկացվել է 920. 000 ՀՀ դրամ (ինը հարյուր քսան հազար դրամ):

Համալսարանում կազմակերպվող միջոցառումների համար իր ֆինանսական միջոցներից արհկոմը հատկացրել է 814. 000 ՀՀ դրամ (ութ հարյուր տասնչորս հազար դրամ):

«Ապրիլի 24»-ին Եղեռնի տարելիցի օրը Ջարդի ձորում անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողին ծաղկեպսակ և ծաղիկներ դրվեցին:

«Մեծ հաղթանակի»-ի և «Շուշիի ազատագրման» տոների կապակցությամբ «Մայր Հայաստան» հուշահամալիրում ծաղկեպսակ և ծաղիկներ դրվեցին (Արհկոմի ֆինանսական միջոցների հաշվին):

Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ իր ֆինանսական միջոցների հաշվին նվերներ, ինչպես նաև ամանորյա մանկական ներկայացումների տոմսեր բաժանվեցին արհկոմի անդամներին: Արհկոմը իր ֆինանսական միջոցների հաշվին համալսարանում կազմակերպեց նաև ամանորյա միջոցառում-հյուրասիրություն:

Արհկոմի նախագահը հաճախակի է հանդիպում համալսարանի ռեկտորի հետ և քննարկում ներբուհական խնդիրներ, կատարում առաջարկներ, մասնավորապես կապված աշխատավարձի բարձրացման հետ:

Արհեստակցական կազմակերպությունը և անձամբ նախագահի ջանքերի շնորհիվ ՇՊՀ-ի քոլեջի կոլեկտիվը կամավոր հիմունքերով նորից անդամագրվեց արհեստակցական կազմակերպությանը:

Արհկոմը աջակցել է ՇՊՀ-ի քոլեջին նաև ֆինանսապես:

Արհեստակցական կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են անդամավճարներից: Արհեստակցական կազմակերպությունը չունի վճարվող աշխատակից: Արհկոմի նախագահը գործում է հասարակական հիմունքներով՝ առանց աշխատավարձի: Ողջ ֆինանսական միջոցները հատկացվում են կոլեկտիվի սոցիալ տնտեսական խնդիրների մեղմման, մշակութային միջոցառումների կազմակերպման, անհատական ֆինանսական օգնությունների և աջակցությունների վրա:

Արհեստակցական կազմակերպության ֆինանսական ծախսերի և գործողությունների հաշվետվությունները տեղակայված են համալսարանի կայքում և հասանելի են բոլորին: Արհեստակցական կազմակերպության գործունեությունը եղել և մնում է թափանցիկ:

ՇՊՀ-ի Արհեստակցական կազմակերպությունը գործել և գործում է «ՀՀ

Աշխատանքային օրենսգրքի», «ՀՀ Արհեստակցական կազմակերպությունների մասին օրենքի» , « ՇՊՀ Արհեստակցական կազմակերպության կանոնադրության» և «ՇՊՀ կոլեկտիվ պայմանագրի» շրջանակներում»:

Արհեստակցական կազմակերպությունն ունի նաև չկատարված գործեր, աշխատանքներ և թերացումներ:

1. Չկարողացանք հասնել այն բանին, որ մեր աշխատակիցներն ունենան բժշկական ապահովագրություն:

2. Չկարողացանք կարգավորել ծննդոգնության խրախուսման գաղափարը՝ դարձնելով այն պարտադիր:
3. Չկարողացանք ավելացնել պրոֆեսորա-դասախոսական կազմի անդամակցությունը արհեսկացական կազմակերպությանը: